Version 01-01-01

Ծառայությունների մատուցման պայմանագիր № 26/05/15/1

ք. Երևան «26» մայիսի 2015թ.

«Նիկիտա Մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս գլխավոր տնօրեն Արա Վիգենի Յաղջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Կոտայքի մարզ Քասախի գյուղապետարան, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս համայնքի ղեկավար՝ Ա. Մկրտչյանի, մյուս կողմից, այսուհետ առանձին և համատեղ հիշատակման դեպքում՝ համապատասխանաբար Կողմ և Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը/այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1. ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1.1. Եթե սույն պայմանագրի տեքստում այլ բան նշված չէ, ապա տերմիններն ու սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունը.

1.1.1. «Բովանդակության առաքման համակարգ» (այսուհետ՝ «Համակարգ»)՝ ծրագրային միջոցների համալիր, որը թույլ է տալիս ձևավորել և առաքել Բովանդակություն:

1.1.2. «SMS-հաղորդագրություն» (sms MT)՝ տեքստային կամ ոչ տեքստային (binary), կարճ հաղորդագրություն (առավելագույնը 160 նշան լատինական այբուբենով և 70 նշան յունիկոդ ծածկագրով, սահմանվածից ավել ծածկագիր պարունակող հաղորդագրությունները Համակարգի կողմից մասնատվում են, հաղորդագրության յուրաքանչյուր մասը կամ երկտարր հաղորդագրությունը կունենա մինչև 140 բայթ ծավալ), որը կարող է ուղարկվել և ստացվել Հաճախորդի, Օպերատորի և Կատարողի տեխնիկական միջոցներով և հասցվում է մինչև Օպերատորի պլատֆորմին:

1.1.3. «Հաճախորդ»՝ Պատվիրատուի աշխատակից, կամ այլ անձ, որի հետ Պատվիրատուն կամ Կատարողը ունեն պայմանավորվածություն Բովանդակություն առաքելու վերաբերյալ:

1.1.4. «Հաշվետու ժամանակահատված»՝ մեկ օրացուցային ամիս: Այն դեպքում, եթե Պայմանագրի կնքման կամ լուծման պահը չի համընկնում օրացուցային ամսվա առաջին կամ վերջին օրվա հետ, ապա համապատասխանաբար հաշվետու ժամանակահատված է համարվում Պայմանագրի կնքման օրվանից սկսած մինչև տվյալ ամսվա վերջին օրը կամ Պայմանագրի դադարեցման ամսվա առաջին օրվանից սկսած մինչև դադարեցման օրն ընկած ժամանակահատվածը:

1.1.5. «Տրաֆիկ»՝ Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում Պատվիրատուի կողմից սպառված Բովանդակության ծավալ : Սակագների սահմանման համար կարող է տարբերակվել լոկալ Տրաֆիկ և միջազգային Տրաֆիկ: Լոկալ Տրաֆիկը հայաստանյան ռեզիդենտների կողմից գեներացվող Տրաֆիկն է, իսկ միջազգային Տրաֆիկը ոչ ռեզիդենտների կողմից գեներացվող Տրաֆիկն է:

1.1.6. «Ձայնային հաղորդագրություն»՝ մինչև մեկ րոպե տևողությամբ ձայնային վահանակ, որը կարող է ուղարկվել բոլոր տեսակի հեռախոսներին:

1.1.7.«Էլեկտրոնային նամակ»՝ Հաճախորդի էլեկտրոնային հասցեին ուղարկվող հաղորդագրություն:

1.1.8 «ՍՊԱՄ» (SPAM)՝ Պատվիրատուի կողմից առանց Հաճախորդների համաձայնության Համակարգի միջոցով Բովանդակության զանգվածային առաքում:

1.1.9. «Երաշխիքային գումար»՝Պատվիրատուի կողմից Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցվող գումարային սահմանաչափ, որը հանդիսանում է Պատվիրատուի կողմից իր վճարման պարտավորությունները կատարելու երաշխիք:

1.1.10. «Ալիաս» (Sender name)՝ Գովազդային, Գործարքային կամ Տեղեկատվական SMS հաղորդագրությունների տարածում պատվիրող կամ տարածող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կարճ անուն, որը նշվում է կարճ հաղորդագրության «Ուղարկող» դաշտում: Ալիասը կարող է կազմված լինել 1-ից 11 տառաթվային նիշերից: Ալիասը չի կարող լինել հեռախոսահամար: Եթե Ալիասը պարունակում է ապրանքային նշան, ֆիրմային անվանում, խորհրդանշան կամ այլ անհատականացման միջոց, ապա տրամադրելով նման Ալիաս, Պատվիրատուն տալիս է իր համաձայնությունը իր անհատականացման միջոցները նման ձևով օգտագործելու վերաբերյալ:

1.1.11. «Գործարքային sms»՝ Այլ անձի միջոցով կամ իր կողմից Հաճախորդին ուղարկվող տեղեկատվական բնույթի SMS հաղորդագրություն, որով ծանուցվում է Հաճախորդին վերջինիս կողմից ֆինանսական, ապահովագրական կամ այլ հաստատություններում, սոցիալական ցանցերում, ճամփորդական գործակալություններում, առևտրական ընկերություններում, ուսումնական և այլ հաստատություններում կատարած կամ ընթացիկ գործարքների և հարցումների մասին, ինչպես նաև Հաճախորդի ծննդյան օրվա կամ կյանքի որևէ իրադարձության կապակցությամբ արվող անհատական հատուկ առաջարկ և/կամ շնորհավորանք: Գործարքային SMS-ների ուղարկումը կրում է ոչ զանգվածային, անհատական բնույթ:

1.1.12. «Տեղեկատվական sms»՝ այլ անձի միջոցով կամ իր կողմից Հաճախորդին ուղարկվող գովազդային բնույթ չկրող, ծանուցող զանգվածային SMS-ներ: Տեղեկատվական SMS-ների շարքին են դասվում նաև պարտքի մարման հիշեցումները, ՀՀ Կառավարության կողմից նախազգուշացնող և այլ տեղեկատվական բնույթ կրող հաղորդագրությունները:

1.1.13. «Գովազդային sms»՝ այլ անձի միջոցով կամ իր կողմից Հաճախորդին ուղարկվող գովազդային և խթանող բնույթ կրող զանգվածային SMS-ներ, որոնց բովանդակությունը համապատասխանում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

1.1.14. «Սև ցուցակ»՝ Օպերատորի մոտ վարվող ցուցակ, որի մեջ ներառվում են այն Հաճախորդների հեռախոսահամարները, որոնք հրաժարվել են SMS հաղորդագրություններ ստանալուց կամ այն Հաճախորդները, որոնք հայտնել են իրենց դժգոհությունը կամ անհամաձայնությունը այդպիսի SMS-ներ ստանալու կապակցությամբ: Ընդ որում SMS-հաղորդագրություններ ստանալու Հաճախորդի անհամաձայնությունը պետք է արտահայտվի Պատվիրատուին ուղղված գրավոր դիմումի տեսքով: Սև ցուցակը Օպերատորի կողմից թարմացվում է՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից ներկայացված համապատասխան պահանջը:

1.1.15. «Շարժական կապի հեռախոսահամարի տեղափոխում» (mobile number portability)՝ առանց հեռախոսահամարի փոփոխության այլ Օպերատորի մոտ տեղափոխված հեռախոսահամար:

1.1.16. «Անցանկալի Բովանդակություն»՝ սույն Պայմանագրի, այդ թվում Հավելված 2-ի պահանջների խախտմամբ ձևավորված կամ առաքված Բովանդակություն:

1.1.17. «API (application programming interface)»՝ հավելվածների ծրագրավորման ինտերֆեյս, որի միջոցով անցուղի /շլյուզ/ է տրամադրվում Կատարողի ծրագրասարքավորումային համակարգին՝ տալով ավտոմատ եղանակով sms հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն Պայմանագրի համաձայն Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, Պատվիրատուի պատվերի հիման վրա Պատվիրատուին մատուցել SMS-ների, Ձայնային հաղորդագրությունների և/կամ էլեկտրոնային նամակների /Բովանդակություն/ ձևավորման և դրանք Հաճախորդներին առաքման հետ կապված ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում վճարել Կատարողին պատշաճ մատուցված Ծառայությունների դիմաց: Պատվիրատուի կողմից պատվերը ներկայացվում է բանավոր կամ գրավոր (հեռախոսազանգով, էլեկտրոնային փոստով, գրավոր նամակով կամ կապի որևէ այլ միջոցով):

2.2. Ծառայությունները մատուցվում են համաձայնեցված Սակագներին (սույն Պայմանագրի թիվ 1 Հավելված) և Ծառայությունների մատուցման հաստատված Կանոններին (սույն պայմանագրի թիվ 2 Հավելված) համապատասխան:

2.3. Սույն Պայմանագրի բոլոր հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս:

2.4. Ծառայությունների մատուցման համար Կատարողը Պատվիրատուի պատվերը ստանալուն պես իր ծրագրային կառավարչի (account manager) միջոցով Պատվիրատուի հետ համաձայնեցնում է Ծառայության բովանդակությունը, մատուցելու ժամկետները և ծավալը: Այն դեպքերում, երբ Կողմերը պայմանավորվում են, որ sms-հաղորդագրությունների ձևավորումն ու առաքումը իրականացնում է պատվիրատուն, ապա Կատարողը Պատվիրատուին տրամադրում է անհատական գաղտնագիր և նշանաբան, որոնք տալիս են իր կայքերի պաշտպանված բնագավառի մուտքի հնարավորություն կամ API անցուղի (շլյուզ) դեպի իր պլատֆորմ, որի միջոցով Պատվիրատուն կարող է ինքնուրույն ձևավորել Բովանդակությունը և իր տիրապետության տակ գտվող հեռախոսահամարներով և էլեկտրոնային հասցեներով ուղարկել իր կողմից որոշված Հաճախորդներին: Անհատական գաղտնագիր, նշանաբան կամ ծածկագիր Կատարողը Պատվիրատուին տրամադրում է միայն անհրաժեշտության դեպքում և իր հայեցողությամբ, որի վերաբերյալ Կողմերը ստորագրում են առանձին հավելված, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մաս: Անհատական գաղտնագիր, նշանաբան կամ ծածկագիր տրամադրելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է դրանք չփոխանցել այլ անձի, չկատարել այնպիսի գործողություն, որը կխափանի կամ այլ կերպ կվնասի Կատարողի ծրագրասարքավորումային համակարգը:

2.5. Բովանդակություն առաքելու համար Հաճախորդների համաձայնությունը ստանալու պարտավորությունը կրում է Կատարողը: Պատվիրատուի տրամադրած հեռախոսահամարների բազայի համար Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կատարողը պարտավոր է.

3.1.1. Մատուցել Պատվիրատուին Ծառայություններ՝ Ծառայությունների մատուցման կանոններին և Սակագներին համապատասխան:

3.1.2. Պահպանել Պատվիատուի տեղեկատվության գաղտնիությունը, որը ստացվել է նրանից Համակարգում գրանցվելու և Ծառայությունների մատուցման գործընթացի ժամանակ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

3.1.3. Պատվիրատուի հետ համաձայնեցնել Ծառայությունները պատշաճ որակով մատուցելու համար անհրաժեշտ հարցերը:

3.1.4. Պատվիրատուի Հաճախորդներին չառաքել այնպիսի SMS-հաղորդագրություններ, որոնք բովանդակում են Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններին նմանատիպ ծառայությունների (ապրանքների) վերաբերյալ տեղեկատվություն կամ գովազդ, բացառությամբ Գործարքային sms-ների:

3.2. Պատվիրատուն պարտավոր է.

3.2.1. Այն Հաճախորդից, որի հեռախոսի կամ էլեկտրոնային հասցեի վրա պլանավորվում է առաքել Բովանդակությունը, ստանալ համաձայնություն այդպիսի Բովանդակություն առաքելու համար, բացառությամբ այն հեռախոսահամարների կամ էլեկտրոնային հասցեների, որոնք վերցված են Կատարողին պատկանող տվյալների բազայից:

3.2.2. Կատարողի Համակարգին իր մուտքի հնարավորությունը (եթե այդպիսին տրամադրվել է) չօգտագործել ՍՊԱՄ կամ այնպիսի հաղորդագրություններ ուղարկելու համար, որոնք կարող են հանգեցնել Կատարողի սարքավորումների աշխատունակության խանգարումների, ինչպես նաև այնպիսի հաղորդագրություններ ուղարկելու համար, որոնք վիրավորական բնույթի են, պարունակում են զրպարտանք, սերմանում են ազգային, կրոնական կամ ռասայական թշնամանք, պարունակում են անպարկեշտ արտահայտություններ, պատերազմի կամ հեղաշրջման կոչեր, դրդում են քրեական հանցագործության կամ այլ անօրինական գործողությունների կատարմանը, հանդիսանում են քաղաքական գովազդ կամ որևէ քաղաքական կուսակցության կամ խմբի կամ անձի քաղաքական բնույթի, այդ թվում երթերի և հավաքների մասին հայտարարություն, կոչ կամ քարոզ:

3.2.3. Անձամբ պատասխանատվություն կրել իր կողմից ձևավորված և առաքված Բովանդակության համար:

3.2.4. Չտրամադրել երրորդ անձանց հնարավորություն միանալու Կատարողի Համակարգին:

3.2.5. Պահպանել Ծառայությունների մատուցման Կանոնները (Հավելված թիվ 2):

3.2.6. Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների դիմաց, սույն Պայմանագրում սահմանված ժամկետներով և կարգով:

3.2.7. Բովանդակություն ստանալուց հրաժարվելու դեպքում տվյալների բազայից հանել տվյալ Հաճախորդի հեռախոսահամարը կամ էլեկտրոնային հասցեն և Բովանդակություն չառաքել տվյալ Հաճախորդին:

3.2.8. Ալիասը փոփոխելու դեպքում, նախապես յոթ աշխատանքային օր առաջ տեղեկացնել Կատարողին դրա մասին, որպեսզի Կատարողը այն համաձայնեցնի Օպերատորի հետ: Օպերատորի կողմից հաստատում չստանալու դեպքում տվյալ Ալիասը չի տեղադրվում:

3.3. Կատարողն իրավունք ունի.

3.3.1. Միակողմանի փոփոխել կիրառվող Սակագները և Պայմանները՝ մինչև այդպիսի փոփոխությունները ի կատար ածելը Պատվիրատուին նախապես 7 (յոթ) օր առաջ գրավոր ծանուցում (էլեկտրոնային նամակ, փոստով կամ առձեռն, ֆաքսիմիլային կապով ուղարկված գրություն և այլն) ուղարկելու միջոցով:

3.3.2. Պահանջել Պատվիրատուից, որպեսզի Պատվիրատուի առաքվող Բովանդակությունը պարունակի Պատվիրատուի կոնտակտային հեռախոսահամարը:

3.3.3. Դադարեցնել Ծառայությունների մատուցումը նախորդ ամսվա վճարները չկատարելու դեպքում, եթե սույն Պայմանագրով նախատեսված Երաշխիքային գումարը (եթե նման վճարում եղել է) չի բավականացնում առկա պարտքը մարելու համար:

3.3.4. Դադարեցնել սույն Պայմանագրով իր պարտավորությունների կատարումն այն դեպքում, եթե վճարում կատարելու պահանջը Պատվիրատուի կողմից չկատարվի սույն Պայմանագրով սահմանված ժամկետներում և չվճարված գումարը գերազանցի Երաշխիքային գումարի չափը: Ծառայությունների մատուցման վերականգնումը իրականացվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի կողմից վերոհիշյալ պահանջը կատարելուց հետո:

3.3.5. Ծառայության գովազդային, տեղեկատվական և մարկետինգային այլ նյութերում օգտագործել Պատվիրատուի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, խորհրդանշանը և անհատականացման մյուս միջոցները:

3.3.6. Պատվիրատուի կողմից վճարում չկատարելու դեպքում առանց Պատվիրատուի համաձայնության Երաշխիքային գումարը (եթե նման վճարում եղել է) ուղղել Պատվիրատուի պարտքերի մարմանը:

3.4. Պատվիրատուն իրավունք ունի.

3.4.1. Պահանջել Կատարողից Ծառայությունների մատուցում՝ սույն պայմանագրի պայմաններին և Ծառայությունների մատուցման Կանոններին (Հավելված թիվ 2) համապատասխան:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պատվիրատուին մատուցվող Ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է ՀՀ դրամով՝ Կատարողի հաշվարկային հաշվին դրամական փոխանցում կատարելով: Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է վճարման հաշիվ և ծառայությունների մատուցման հանձման-ընդունման արձանագրություն:

4.2. Վճարումն իարականացվում է հետվճարային կամ կանխավճարային, ինչպես նաև Երաշխիքային գումար վճարելու եղանակով: Վճարման եղանակը որոշում է Կատարողը:

4.3. Հետվճարային եղանակով վճարումն իրականացնելու դեպքում Կատարողը, Սակագների (Հավելված թիվ 1) և սպառած Տրաֆիկի հիման վրա Պատվիրատուին է ներկայացնում հաշիվ, որի հիման վրա Պատվիրատուն պարտավորվում է հինգ բանկային օրվա ընթացքում կատարել վճարում,:

4.4. Եթե Պատվիրատուն առարկություններ չի ներկայացնում ներկայացված հաշվի վերաբերյալ դրանք ներկայացնելու պահից երկու օրվա ընթացքում, ապա համարվում է, որ Պատվիրատուն հաստատում է հաշիվը: Եթե Պատվիրատուն առարկություններ ունի, ապա Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված ծառայությունների մասին ակտ, որտեղ Կատարողը մանրամասն նշում է մատուցված Ծառայությունների ծավալի և ժամկետների վերաբերյալ:

4.5. Կանխավճարային եղանակով վճարում իրականացնելու դեպքում Ծառայության պատվերը Կատարողի կողմից հաստատելու պահից 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողին կանխավճար է կատարում՝ պատվերի ամբողջ գումարի չափով, որը փոխանցվում է Կատարողի հաշվարկային հաշվին: Կանխավճարային եղանակով վճարում կատարելիս Կատարողը վճարումը կարող է իրականացնել նաև վճարահաշվարկային տերմինալների միջոցով: Այս դեպքում Կատարողը Պատվիրատուին Ծառայությունների մատուցումը սկսում է Պատվիրատուի կողմից կատարած վճարումը հավաստող փաստաթուղթը ստանալու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.6. Եթե Կողմերը պայմանավորվում են Երաշխիքային գումար վճարելու մասին, ապա Երաշխիքային գումարի չափը կազմում է 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ, որը Պատվիրատուն վճարում է սույն Պայմանագիրը կնքելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Մատուցվող Ծառայությունների նկատմամբ Պատվիրատուի բողոքները ներկայացվում են Կատարողին միայն գրավոր ձևով՝ վիճելի հարցի ծագման պահից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուի բողոքների քննարկման ժամկետը կազմում է առավելագույնը 14 (տասնչորս) աշխատանքային օր:

5.2. Եթե Կատարողը ստանում է տեղեկատվություն Պատվիրատուի կողմից Ծառայությունների Մատուցման Կանոնների (Հավելված թիվ 2) խախտման մասին, ապա Կատարողն անհապաղ դադարեցնում է Ծառայությունների մատուցումը, այնուհետև մեկ օրացուցային օրվա ընթացքում ծանուցում է Պատվիրատուին ծառայությունների դադարեցման մասին և պարզաբանում է ստեղծված իրավիճակը Կողմերի ներկայությամբ:

Եթե խախտման փաստը հաստատվի, Կատարողն իր ընտրությամբ իրավասու է.

- 6.2. կետին համապատասխան միակողմանի կարգով լուծել սույն պայմանագիրը, գանձելով Պատվիրատուից տուգանք՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար հինգ հարյուր հազար (500000) ՀՀ դրամի չափով: Եթե Պատվիրատուի թույլ տված խախտումների հետևանքով Կատարողը իրավասու մարմնի կողմից ենթարկվել է վարչական տույժի կամ Օպերատորին կամ որևէ երրորդ անձի վճարել է տուգանք, ապա Կատարողի կողմից վարչական տույժի ենթարկվելու վերաբերյալ հիմնավորող փաստաթուղթը ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Պատվիրատուն պարտավոր է վճարել նաև Կատարողի վճարած վարչական տուգանքը կամ Օպերատորին կամ երրորդ անձի վճարած տուգանքը կամ հատուցել վարչական տույժի կամ տուգանքի հետևանքով Կատարողի կրած վնասները: Պատվիրատուի հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո վերսկսել Ծառայությունների մատուցումը:

եթե Պատվիրատուի ներգրավմամբ անցկացված պարզաբանման արդյունքում խախտման փաստը չի հաստատվել, ապա Կատարողը վերսկսում է Ծառայությունների մատուցումը:

5.3. Կողմերի միջև բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով փոխհամաձայնության չհանգելու դեպքում, վեճերը քննվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4.Պատվիրատուի տրամադրած տեղեկատվության համար Կատարողը պատասխանատվություն չի կրում:
5.5. Կատարողի մատուցած Ծառայություններից օգտվելու անհնարինության վերաբերյալ Պատվիրատուի կողմից հիմնավորված բողոք ներկայացվելու դեպքում Կատարողը տաս (10) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է վերադարձնում Պատվիրատուից ստացված գումարը, հանելով առաքված Բովանդակության գինը:
5.6. Կատարողի սերվերների տեխնիկական և ծրագրային խափանումների հետևանքով Պատվիրատուի կրած ուղղակի և անուղղակի վնասների համար Կատարողը պատասխանատվություն չի կրում:
5.7. Սույն Պայմանագրով նախատեսված վճարումները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.5 տոկոսի չափով:
5.8. Կողմերը պայմանավորվում են, որ բաց թողնված օգուտը ենթակա չէ հատուցման:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Պատվիրատուի կողմից Ծառայությունների վճարման մասին Պայմանագրի պայմանների խախտման դեպքում սույն Պայմանագիրը կարող է լուծվել Կատարողի կողմից միակողմանի կարգով: Այդ դեպքում Կատարողը պարտավոր է գրավոր ձևով ծանուցել Պատվիրատուին՝ սույն պայմանագրով Ծառայությունների մատուցումը դադարեցնելուց առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ:
6.2. Պատվիրատուի կողմից Ծառայությունների մատուցման Կանոնների (Հավելված թիվ 2) խախտման դեպքում սույն Պայմանագիրը կարող է անհապաղ լուծվել Կատարողի կողմից միակողմանի կարգով: Այդ դեպքում Կատարողը պարտավոր է գրավոր ձևով (հեռախոսազանգով, էլեկտրոնային փոստով, գրավոր նամակով կամ կապի որևէ այլ միջոցով) ծանուցել Պատվիրատուին՝ սույն Պայմանագրով Ծառայությունների մատուցումը դադարեցնելուց առնվազն մեկ օր անց:
6.3. Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման մասով իր պարտավորությունների չկատարման դեպքում Պատվիրատուն իրավասու է իր ընտրությամբ նախաձեռնել հետևյալ գործողություններից որևէ մեկը.
- միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը՝ գրավոր ձևով ծանուցելով Կատարողին սույն Պայմանագիրը լուծելու վերաբերյալ իր մտադրության մասին.
- պահանջել Ծառայությունների մատուցում:
6.4. Սույն Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, ընդ որում լուծումը նախաձեռնող Կողմը պարտավոր է գրավոր ձևով (հեռախոսազանգով, էլեկտրոնային փոստով, գրավոր նամակով կամ կապի որևէ այլ միջոցով) ծանուցել մյուս Կողմին սույն Պայմանագրի լուծման մասին՝ առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ:
6.5. Սույն Պայմանագիրը կարող է լուծվել ցանկացած ժամանակ՝ Կողմերի համաձայնությամբ:
6.6. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել Պայմանագրի կատարումից, Կատարողին վճարելով Կատարողի փաստացի կատարած ծախսերը:

7. ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ

7.1. Կողմերից ոչ մեկը չի կրում պատասխանատվություն մյուս կողմի առջև պարտավորությունների չկատարման համար, որը պայմանավորված է կողմերի կամքից և ցանկությունից անկախ երևան եկած հանգամանքներով, որոնք հնարավոր չէ կանխատեսել կամ խուսափել, ներառյալ հայտարարված կամ փաստացի պատերազմը, քաղաքացիական հուզումները, համաճարակները, շրջափակումները, բեռնագրավումները, երկրաշարժերը, ջրհեղեղները, հրդեհները և այլ տարերային աղետներ, ինչպես նաև պետական մարմինների կողմից թողարկված նորմատիվային-իրավական ակտերը, ինտերնետ-մալուխի կամ հեռահաղորդակցության այլ սարքավորման խափանումը, որոնք առաջացել են երրորդ կողմի գործողությունների արդյունքում:
7.2. Այն Կողմը, որը չի կատարում իր պարտավորություններն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պետք է անհապաղ տեղեկացնի մյուս Կողմին՝ կանխարգելման և սույն պայմանագրով պարտավորությունների կատարման վրա ազդեցության մասին:
7.3. Սույն Պայմանագրի 7.2. կետում նշված պարտավորությունների չկատարումը զրկում է Կողմին սույն Պայմանագրի 7.1. կետում նշված հանգամանքների վրա հիմնվելու իրավունքից:

8. ՀՆԱՐԱՎՈՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Կատարողի Համակարգի օգնությամբ Պատվիրատուի Բովանդակության վերաբերյալ գրավոր կամ բանավոր բողոքների կամ դիմումների դեպքում, եթե նման բողոքներն ու դիմումները ստացվել են Օպերատորի, Բաժանորդի կամ այլ շահագրգիռ անձի կողմից, Կատարողն անհապաղ դրանք փոխանցում

է Պատվիրատուին, որը ոչ ավել, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ստացված բողոքների հիմնավորվածության ստուգում և այդ մասին գրավոր և Պատվիրատուի իրավասու անձի ստորագրությամբ պատասխան է տալիս Կատարողին:

8.2. Մինչև Պատվիրատուի կողմից անցկացվող ստուգումների ավարտը Կողմերը պարտավոր են ձեռնարկել հետևյալ ժամանակավոր միջոցառումները հնարավոր վնասը նվազագույնի հասցնելու նպատակով.

- Կատարողը պահանջում է Պատվիրատուից, որպեսզի վերջինս անհապաղ դադարեցնի անցանկալի Բովանդակության առաքումը, իսկ դրա անհնարինության դեպքում ժամանակավոր արգելափակել Պատվիրատուի մուտքը Կատարողի կայքերի պաշտպանված բնագավառներ կամ պլատֆորմ:

8.3. Այն դեպքում, երբ Կողմերից մեկը գրանցել է անցանկալի Բովանդակության առաքման դեպք, սակայն Բաժանորդից կամ Օպերատորից որևէ բողոք չի ստացվել, ապա տվյալ կողմը այդ մասին տեղեկացնում է մյուս կողմին և 24 ժամվա ընթացքում Կողմերը ձեռնարկում են 8.2. կետում նշված միջոցառումները:

8.4. Ամեն դեպքում Պատվիրատուն պարտավոր է ամենաուշը երեք աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել բողոքը կամ դիմումը ուղարկած բաժանորդին կամ այլ շահագրգիռ անձին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն Պայմանագիրն ուժի է մեջ է մտնում այն կնքելու պահից և գործում է մեկ տարի ժամկետով: Պայմանագրի ժամկետը հանդիսանում է յուրաքանչյուր անգամ ևս մեկ տարով երկարացված, ոչ ուշ քան սույն Պայմանագրի ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից ոչ մեկը գրավոր չի տեղեկացրել մյուս Կողմին սույն Պայմանագրի լուծման մտադրության մասին:

9.2. Սույն Պայմանագիրը, ներառյալ Հավելվածներն ու Լրացումները, փոխարինում են բոլոր ցանկացած այլ նախնական համաձայնագրերը, գրավոր կամ բանավոր պայմանավորվածությունները, որոնք վերաբերվում են սույն Պայմանագրի առարկային:

9.3. Սույն Պայմանագրով Ծառայությունների մատուցման անհնարինության դեպքում Կատարողը այդ մասին գրավոր ծանուցում է Պատվիրատուին:

9.4. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով (ներառյալ հավելվածները), երկու օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.5. Սույն Պայմանագրով չլուծված բոլոր հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

9.6.Կողմերը պարտավոր են անհապաղ գրավոր տեղեկացնել միմյանց կազմակերպահիրավական ձևի, իրավաբանական հասցեի, բանկային վավերապայմանների և այլ վավերապայմանների փոփոխությունների մասին:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
Կոտայքի մարզ Քասախի գյուղապետարան	«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Կոտայքի մ., գ. Քասախ, Ս. Զալալյանի հրապարակ	Իրավաբանական հասցե՝ 0070, ՀՀ, ք.Երևան, Ալեք Մանուկյան 9
Գործունեության հասցե՝ ՀՀ, Կոտայքի մ., գ. Քասախ, Ս. Զալալյանի հրապարակ	Գործունեության հասցե՝ 0070, ՀՀ, ք.Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 410
ՀՎՀՀ՝ 03300782	ՀՎՀՀ՝ 02701579
Հ/հ՝ 900112105185	Հ/հ՝ 1930009490430100
Բանկ՝ ՀՀ Պետ. Բյուջե - Ֆին. նախ. գործառնական վարչություն	
էլ.հասցեն՝ kasakkh-village@mail.ru	էլ.հասցեն՝ info@nikita.am
Հեռ՝ (+37493) 440324	Հեռ.՝ (+37410) 512073

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կոտայքի մարզ Քասախի գյուղապետարան
համայնքի ղեկավար

_____/Ա. Մկրտչյան/

ԿԱՏԱՐՈՂ
«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն

_____/Ա.Վ.Յաղջյան/

Հավելված թիվ 1

Առ «26» մայիսի 2015 թ. թիվ 26/05/15/1 Պայմանագրի

ՍԱԿԱԳՆԵՐ

Տարիֆիկացվում են այն բոլոր SMS և ձայնային հաղորդագրությունները, էլեկտրոնային նամակները, որոնք ուղարկվում են Կատարողի ծրագրասարքավորումային համակարգի միջոցով և հասնում կապի Օպերատորի սերվերին (sms հաղորդագրության դեպքում), հեռախոսակայանին (ձայնային հաղորդագրության դեպքում): Տարիֆիկացվում են այն էլեկտրոնային նամակները, որոնց չառաքվելու վերաբերյալ հետադարձ նամակ չի ստացվել:

Բոլոր սակագները նշված են ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ:

Հայաստանի տարածքում SMS, ձայնային հաղորդագրությունների և էլեկտրոնային նամակների սակագները՝

աղյուսակ 1

ՀՀ	Ամսական հոսք	1 SMS - հաղորդագրության գինը
1	1-ից ավելի	4,8 ՀՀԴ

ՀՀ	Ամսական հոսք	1 Email - հաղորդագրության գինը
1	1-ից մինչև 5000	3 ՀՀԴ
2	5001-ից մինչև 20000	2 ՀՀԴ
3	20000-ից ավելի	1 ՀՀԴ

ՀՀ	Ամսական հոսք	1 ձայնային հաղորդագրության գինը
1	ներքաղաքային զանգեր Երևան քաղաքում Beeline ֆիքսված հեռախոսակապի ցանցի ներսում, միջքաղաքային զանգեր դեպի ՀՀ և ԼՂՀ քաղաքային ֆիքսված հեռախոսակապի ցանցեր	30 ՀՀԴ - 50 ՀՀԴ
2	Զանգեր դեպի ՀՀ և ԼՂՀ բջջային ցանցեր	100 ՀՀԴ - 150 ՀՀԴ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կոտայքի մարզ Քասախի գյուղապետարան
համայնքի ղեկավար

_____/Ա. Մկրտչյան/

ԿԱՏԱՐՈՂ
«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն

_____/Ա.Վ.Յաղջյան/

Հավելված թիվ 2

Առ «26» 05. 2015 թ. թիվ 26/05/15/1 Պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Հաճախորդն այն անձն է, որը տվել է իր համաձայնությունը Բովանդակություն ստանալու համար:
2. Կատարողը տրամադրում է նաև տեխնիկական աջակցության ծառայություն, որը գործում է երկուշաբթիից ուրբաթ օրերին միայն աշխատանքային ժամերին (10.00-18.00)՝ info@nikita.am էլեկտրոնային փոստով կամ (+37410) 512888 հեռախոսահամարով:
3. Կատարողը պատասխանատվություն չի կրում տեխնիկական սպասարկման, ռեգլամենտային աշխատանքների անցկացման հետ կապված Ծառայությունների մատուցման դադարների համար, ինչպես նաև հետևյալ իրավիճակների առաջացման դեպքում՝ էլեկտրասնուցման հետ կապված խնդիրներ, ինտերնետի բացակայություն երրորդ անձի մեղքով, Կատարողի սերվերների տեխնիկական և ծրագրային խափանումներ և այլ իրավիճակներ: Պատվիրատուն պետք է ապահովի իրեն տրված գաղտնագրի գաղտնիությունը: Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի առջև ցանկացած վնասների համար, որոնք Պատվիրատուն կրել է իր գաղտնագիրը կորցնելու կամ որևէ այլ ձևով երրորդ անձի հայտնի դառնալու պատճառով:
4. Պատվիրատուն պարտավորվում է օգտվել Ծառայությունից միայն իր աշխատակիցներին և/կամ Հաճախորդներին տեղեկատվություն փոխանցելու նպատակով:
5. Պատվիրատուն պարտավորվում է չօգտագործել Ծառայությունը կոպիտ, վիրավորական, նվաստացուցիչ կամ սպառնացող բնույթի, այլոց գործարար համբավին վնասելու, այլոց հեղինակային և այլ իրավունքները խախտելու, զրպարտելու, ազգային, կրոնական կամ ռասայական թշնամանք սերմանելու, անպարկեշտ արտահայտություններ, պատերազմի կամ հեղաշրջման կոչեր տարածելու, քրեական հանցագործության կամ այլ անօրինական գործողությունների կատարմանը դրդելու, հանդիսանում են քաղաքական գովազդ կամ որևէ քաղաքական կուսակցության հայտարարություն տարածելու նպատակով:
6. Պայմանների (Հավելված թիվ 2) կետերի խախտման դեպքում Կատարողն իրավասու է դադարեցնել Ծառայությունների մատուցումը և լուծել Ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիրը միակողմանի կարգով:
7. Պատվիրատուն պարտավոր է օգտագործել Ծառայությունը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և միայն Հաճախորդներին տեղեկատվություն փոխանցելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում Հաճախորդից ստացված համաձայնությունը Բովանդակություն ստանալու վերաբերյալ ներկայացնել Կատարողին՝ որպես Հաճախորդի իր ցանկությամբ հաղորդագրությունները ստանալու անհերքելի ապացույց:
8. Պատվիրատուն երաշխավորում է, որ առաքվող Բովանդակությունը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին:
9. Տեղեկատվական, Գովազդային MT SMS և ձայնային հաղորդագրությունները և էլեկտրոնային նամակները Հաճախորդի համար կրում են միայն տեղեկատվական բնույթ և կարող են ուղարկվել միայն աշխատանքային օրերին՝ 10.00-21.00 ժամանակահատվածում:
10. Գործարքային MT SMS և ձայնային հաղորդագրությունները և էլեկտրոնային նամակները նախատեսված են առանձնահատուկ տվյալ Հաճախորդի համար և ուղարկվում են նրա կողմից համապատասխան գործարք կատարելուց անմիջապես հետո: Տվյալ հաղորդագրությունները կարող են ուղարկվել ցանկացած օրի և ժամի:
11. Այն դեպքերում, երբ Բովանդակությունը ձևավորում է Պատվիրատուն, ապա վերջինս պետք է հաշվի առնի հետևյալ առանձնահատկությունները՝
ա) ms office ծրագրային փաթեթի որևէ ծրագրում հաղորդագրության տեքստը պատրաստելու, այնուհետև Համակարգում պատճենելու եղանակով sms հաղորդագրություն ձևավորելու դեպքում տեքստում օգտագործված որևէ կետադրական նշան կամ սիմվոլ (հատկապես ոչ յունիկոդ) կարող է մասնատել SMS-հաղորդագրությունը.
բ) որոշ կետադրական նշանների կամ տառերի միասին, առանց բացատի օգտագործումը կարող է Համակարգի կողմից վերածվել սիմվոլների.
գ) լատինական այբուբենի 160 նիշից և յունիկոդ ծածկագրի 70 նիշից ավել նիշ պարունակող SMS-հաղորդագրությունը Օպերատորի պլատֆորմի կողմից մասնատվում է երկու կամ ավելի մասերի:
12. Մասնատված SMS-հաղորդագրության համար պատվիրատուն վճարում է յուրաքանչյուր մասի համար առանձին:

13. Շարժական կապի հեռախոսահամարի տեղափոխության գործընթացում գտնվող հեռախոսահամարին SMS-հաղորդագրությունները և Ձայնային հաղորդագրությունները կարող են չհասնել Կատարողից անկախ պատճառներով:

1.4. Ծառայությունը համարվում է մատուցված, եթե sms-հաղորդագրությունը հասցվել է Օպերատորի սերվերին՝ անկախ Հաճախորդի կողմից այն ստանալու փաստից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կոտայքի մարզ Քասախի գյուղապետարան
համայնքի ղեկավար

_____/Ա. Մկրտչյան/

ԿԱՏԱՐՈՂ
«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն

_____/Ա.Վ.Յաղջյան/

Հավելված 3

Առ «26» 05. 2015 թ. թիվ 26/05/15/1 Պայմանագրի

Կատարողի Կայքերին կամ պլատֆորմին մուտքի հնարավորություն տրամադրելու պայմանները

1. Սույն հավելվածով Կատարողը Պատվիրատուին տրամադրում է իր կայքերի (այսուհետ՝ Կայքեր) պաշտպանված բնագավառի կամ պլատֆորմին մուտքի հնարավորություն: Այդ նպատակով Կատարողը Պայմանագիրը կնքելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է տրամադրում գաղտնագիր և նշանաբան, իսկ API անցուղի տրամադրելու դեպքում՝ համապատասխան ծածկագիր և API անցուղու բնութագիրը (տվյալները):
2. Գաղտնագիրը, նշանաբանը կամ ծածկագիրը տրամադրվում է դրանք Պատվիրատուի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:
3. Կայքերին և պլատֆորմին մուտքի տրամադրումը Պատվիրատուին հնարավորություն է տալիս ինքնուրույն ձևավորել և առաքել sms հաղորդագրություններ: API անցուղու միջոցով Բովանդակության առաքումն իրականացվում է ավտոմատ ռեժիմով:
4. Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի տրամադրած գաղտնագիրը, նշանաբանը, ծածկագիրը և API անցուղու տվյալները պահել խիստ գաղտնի, չտրամադրել երրորդ անձանց, ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները գաղտնագիրը և նշանաբանը այլ անձանց հայտնի չդառնալու և դրանց բացահայտումը կանխելու համար:
5. Պատվիրատուն պարտավոր է անձամբ մուտք գործել Կայքեր կամ Կատարողի պլատֆորմ և իրեն տրամադրված գաղտնագրի և նշանաբանի միջոցով չապահովել այլ անձանց մուտքը Կայքերի պաշտպանված բնագավառներ կամ Կատարողի պլատֆորմ:
6. Եթե որևէ պատճառով գաղտնագիրը, նշանաբանը կամ ծածկագիրը հայտնի են դարձել երրորդ անձի, Պատվիրատուն պարտավոր է իրեն այդ մասին հայտնի դառնալու պահից անհապաղ տեղեկացնել Կատարողին:
7. Պատվիրատուն պարտավոր է՝

ա) իրեն տրամադրված մուտքի հնարավորությունը օգտագործել բացառապես Պայմանագրով սահմանված լիազորությունների շրջանակում և նպատակով.

բ) չկատարել այնպիսի գործողություն, որը կխափանի կամ որևէ ձևով կվնասի կատարողի ծրագրասարքավորումային համակարգը.

գ) sms հաղորդագրություններ ձևավորելիս և առաքելիս խստորեն պահպանել պայմանագրի Հավելված 2-ում սահմանված բոլոր կանոններն ու պահանջները:

8. Պատվիրատուի կողմից սույն հավելվածի և Պայմանագրի դրույթների խախտման դեպքում կամ որևէ պահի իր հայեցողությամբ Կատարողը արգելափակում է Պատվիրատուին տրամադրված գաղտնագիրը և նշանաբանը, ինչպես նաև API անցուղին: Խախտումների պատճառով արգելափակման դեպքում Կատարողի կողմից կարող են վերաակտիվացվել միայն Պատվիրատուի կողմից այդ խախտումները վերացնելու դեպքում:
9. Պայմանագիրը դադարեցնելու դեպքում Կայքերի պաշտպանված բնագավառներին կամ պլատֆորմին մուտքի հնարավորությունը արգելափակվում է Պայմանագրի դադարեցման պահից:
10. Սույն հավելվածի գործողության դադարեցումը չի առաջացնում Պայմանագրի գործողության դադարեցում, եթե Կողմերը պայմանավորվել են շարունակել համագործակցությունը առանց Պատվիրատուին Կայքերի պաշտպանված բնագավառներին կամ պլատֆորմին մուտքի հնարավորություն տալու պայմանի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կոտայքի մարզ Քասախի գյուղապետարան համայնքի ղեկավար	«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ Գլխավոր տնօրեն
_____/Ա. Մկրտչյան/	_____/Ա.Վ.Յաղջյան/